ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

11 սեպտեմբերի 2024 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 5 անդամներ:

Բացակա էին՝ Ֆայզո Ալիյանը, Ալիխան Համեյանը, Սերժիկ Մուրադովը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի ժ/պ՝ Արթուր Գրիգորյանը

Նիստը արձանագրում էր առաջատար մասնագետ՝ սոց.աշխատող՝ Շուխիկ Պապիկյանը

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 8 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 6-րդ մասերով և հիմք ընդունելով Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի առաջարկությունը՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 11-ի N 8 հերթական նիստի օրակարգը.

1.Ալագյազ համայնքի Ռյա Թազա բնակավայրի 144 տեղ հզորությամբ կրթահամալիրի կառուցման համար «Էկո Բիլդինգ» ՍՊ ընկերությանը նախնական համաձայնություն տալու մասին:
2.Ալագյազ համայնքի Ջամշլու վարչական բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդ վաճառքով օտարելու թույլատվություն տալու մասին:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 51/

Լսեցին

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՌՅԱ ԹԱԶԱ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ 144 ՏԵՂ ՀԶՈՐՈՒԹՅԱՄԲ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ «ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ-ԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԻՆԵ ԱՅՎԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման 28-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով 2024 թվականի ապրիլի 10-ին Ալագյազ համայնքի Ռյա Թազա բնակավայրում 144 տեղ հզորությամբ կրթահամալիրի կառուցման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ անցկացված հանրային քննարկման արձանագրությունը, Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ նախնական համաձայնություն «Էկո Բիլդինգ» ՍՊ ընկերությանը Ալագյազ համայնքի Ռյա Թազա բնակավայրում 144 տեղ հզորությամբ կրթահամալիր կառուցելու համար:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 52/

Լսեցին

ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԱՄՇԼՈՒ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՊԱՊԱԿ ՄԽԻԹԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, ՀՀ Հողային օրենսգրքի 68-րդ և 70-րդ հոդվածների դրույթներով, հիմք ընդունելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով Անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 04.06.2020թ N 1023 որոշման պահանջները և Ալագյազ համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի առաջարկությունը՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Թույլատրել համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարին՝ համայնքի սեփականություն համարվող Ալագյազ համայնքի Ջամշլու վարչական բնակավայրի 1-ին փողոց 10 հասցեում գտնվող 02-090-0106-0013 կադաստրային ծածկագրով 0.11659 հա բնակավայրային նպատակային նշանակության և բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը՝ 1 լոտով, աճուրդ-վաճառքով օտարել:
2.Հաստատել հողամասի մեկնարկային գինը՝ 256498 (երկու հարյուր հիսունվեց հազար չորս հարյուր իննսունութ) ՀՀ դրամ, 1 քմ 220 ՀՀ դրամ:
3.Համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարին՝ ապահովել աճուրդի հրապարակայնությունը, նախապատրաստել համապատասխան փաստաթղթեր աճուրդ-վաճառքը պատշաճորեն կազմակերպելու և անցկացնելու համար:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 53/

Ավագանու անդամներ

ՋԱԼԻԼ ԽՈՒԴՈՅԱՆ

ՄԱՐԱՏ ԿՆՅԱԶՅԱՆ

ՌԵԶՈ ՄԱԽՄՈՒԴՈՎ

ԱՆԶՈՐ ՇԱԲՈՅԱՆ

ՇԻՐԱԼԻ ՉՈԼՈՅԱՆ

Համայնքի ղեկավարի ժ/պ

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Շուխիկ Պապիկյանը _____